

ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե

Հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 22/9

7 մայիսի 2013թ.

Քննարկվեց Ա/Ձ Հովհաննես Գրիգորյանի 23.04.2013թ-ի դիմում-բողոքը ՀՀ ԿԱ ՊԵԿ Արմավիրի ՏՀՏ 05.04.2013թ-ի թիվ 2121398 ստուգման ակտի դեմ:

Ա/Ձ Հովհաննես Գրիգորյանի բողոքում մասնավորապես նշված է.

ծանոթանալով Արմավիրի ՏՀՏ-ի կողմից կազմված բոլոր փաստաթղթերին, հանգեցի եզրակացության, որ Արմավիրի ՏՀՏ-ի հարկային տեսուչները համապատասխան փաստաթղթերը կազմելիս ոչ թե ղեկավարվել են ՀՀ-ում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին> և <Հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման մասին> ՀՀ օրենքներով, այլ զբաղվել են ինքնագործունեությամբ:

Իրականում տեղի է ունեցել հետևյալը: Ա.թ. մարտի 22-ին ք.Արմավիր, Սայաթ-Նովա 120 հասցեում գտնվող, իմ կողմից տնօրինվող խանութ են այցելել ինչ որ անձիք: Խանութից բացակայել են և առանց համապատասխան վկայագրերը ներկայացնելու, իմ կողմից լիազորված աշխատակից Վերգինե Այվազյանին հարցրել են, թե ինչու գնորդներին ՀԴՄ կտրոն չի տրամադրվում: Աշխատակցուհու պատասխանը լսելուց հետո, որ բոլոր գնորդներին էլ ՀԴՄ կտրոն տրամադրվում է, տույնները մոտենում են հսկիչ-դրամարկղային մեքենային և ուսումնասիրում որոշ գնորդների կողմից չստացած և սեղանի վրա կուտակված ՀԴՄ կտրոնները: Որից հետո, իրենց ցուցումով Վերգինե Այվազյանը գրել է հայտարարություն (2-րդ օրինակը մեզ չի տրամադրվել), որ կանխիկ դրամով առևտուր անելիս բոլոր դեպքերում տպվում է ՀԴՄ կտրոն: Այնուհետև նրանք հեռանում են խանութից, սակայն քիչ անց վերադառնում են, սեղանի վրայից վերցնում են կուտակված 5-6 ՀԴՄ կտրոնները և առանց որևէ համապատասխան արձանագրություն կազմելու հեռանում: Նույն օրը հեռախոսով հրավիրել են ինձ Արմավիրի ՏՀՏ, ինչ-որ արձանագրություններ ստորագրելու նպատակով: Արդյունքում պարզվել է, որ կազմվել է արձանագրություն այն մասին, որ սեղանի վրայից վերցված ՀԴՄ կտրոններից մեկի դարձերեսին բացակայում է հատուկ համարանիշը: Իմ կողմից մերժվել է որևէ փաստաթուղթ ստորագրելը, որից հետո փոստի միջոցով ստացել են վերոհիշյալ փաստաթղթերը:

Կարծում եմ, որ անհրաժեշտ է չեղյալ համարել Արմավիրի ՏՀՏ 05.04.2013թ-ին կազմված թիվ 2121398 ակտը, հետևյալ պատճառաբանություններով.

1. Ստուգման ակտի հիմքում դրված՝ Ա/Ձ Հովհաննես Գրիգորյանի կողմից տնօրինվող՝ ք.Արմավիր, Սայաթ-Նովա 120 հասցեում գտնվող խանութում, ՀԴՄ շահագործման կանոնների վերաբերյալ ուսումնասիրություն չի կատարվել և Արմավիրի ՏՀՏ-ի թիվ 2213606 ուսումնասիրության արձանագրությունում նշված անձի (Արմավիրի մարզի Եղեգնուտ գյուղի բնակիչ՝ Գարեգին Մնացականյան, որի անձնագրային տվյալները ուսումնասիրության հանձնարարագրում բացակայում են) մասնակցությամբ հսկիչ գնում չի իրականացվել: Հետևաբար խախտվել են ՀՀ-ում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին> ՀՀ օրենքի հավելված 2-ի 1.4 կետի պահանջները:

2. Արմավիրի ՏՀՏ պետի 23.03.2013թ. թիվ 2213606 հանձնարարագրով ուսումնասիրություն անցկացնելու լիազորություն ստացած հարկային տեսուչները ՀՀ կառավարության սահմանված կարգով պետք է ետ վերադարձնեին գնված ապրանքը, որի դիմաց իբր տրամադրվել է նշված ՀԴՄ կտրոնը և պետք է կազմեին համապատասխան արձանագրություն: Հետևաբար նրանք չեն առաջնորդվել ՀՀ կառավարության 27.11.2003թ. թիվ 1561-Ն որոշմամբ հաստատված կարգի 3-րդ բաժնի պահանջներով:

3. ՀՀ ԿԱ ՊԵԿ Արմավիրի ՏՀՏ 05.04.2013թ. թիվ 2121398 ակտը կնքված չէ նշված ակտն ընդունած պետական մարմնի կնիքով:

Կարծում եմ, որ ստուգման ակտը կազմած անձինք ՀԴՄ կիրառման կանոնների խախտման փաստ հայտնաբերելու համար ՀՀ օրենսդրությամբ իրենց տրված իրավունքները կիրառելու և սահմանված լիազորությունները օգտագործելու միջոցով օրենքով սահմանված ապացույցներ ձեռք բերելու փոխարեն, ինքնագործունեությամբ փորձել են ապացույցներ ձեռք բերել օրենքների խախտմամբ կամ օրենքների սխալ կիրառման միջոցով:

Ելնելով վերոգրյալից ԱՁ Հովհաննես Գրիգորյանը խնդրում է չեղյալ համարել Արմավիրի ՏՀՏ 05.04.2013թ-ի թիվ 2121398 ստուգման ակտը:

ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), լսելով Ա/Ձ Հովհաննես Գրիգորյանի և ստուգման ակտը կազմած պաշտոնատար անձի ներկայացված փաստարկները, ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ եզրակացության, որ բողոքը ենթակա է բավարարման հետևյալ պատճառաբանությամբ:

Համաձայն ՀՀ ԿԱ ՊԵԿ Արմավիրի ՏՀՏ պետի 21.03.2013թ-ի թիվ 2213606 հանձնարարագրի Ա/Ձ Հովհաննես Գրիգորյանի մոտ իրականացվել է հսկիչ-դրամարկղային մեքենաների շահագործման կանոնների պահպանման ուսումնասիրություն (հսկիչ գնում): Արդյունքում 22.03.2013թ-ին կազմվել է հսկիչ գնումների արդյունքների վերաբերյալ թիվ 2213606 արձանագրությունը (այսուհետ նաև արձանագրություն), որով մասնավորապես արձանագրվել է.

Արմավիրի մարզի Եղեգնուտ գյուղի բնակիչ Գարեգին Մնացականյանը 22.03.13թ-ին ժամը 12:24-ին Ա/Ձ Հովհաննես Գրիգորյանին պատկանող ք.Արմավիր, Սայաթ-Նովա 120 հասցեում գործող խանութից կատարեց հսկիչ գնում՝ 1 հատ մետաղ կտրոզ գործիքի կտրիչ 500 դրամ արժողությամբ, որի դիմաց վճարումը կատարվեց կանխիկ դրամով: Գումարը Ա/Ձ Հովհաննես Գրիգորյանի վաճառողուհի Վերգինե Այվազյանի կողմից մուտքագրվեց ՀԴՄ և տրամադրվեց ՀԴՄ կտրոն գանձված գումարի չափով, սակայն տրամադրված ՀԴՄ կտրոնը չէր բավարարում ՀՀ կառավարության 01.06.05թ-ի թիվ 946-Ն որոշման 6-րդ և 7-րդ կետերի պահանջներին: Մեր կողմից Ա/Ձ Հովհաննես Գրիգորյանի վաճառողուհի Վերգինե Այվազյանին ներկայացվեցին ծառայողական վկայականները և ուսումնասիրության հանձնարարագիրը՝ ծանոթացման: Ուսումնասիրությամբ պարզվեց, որ վաճառողուհի Վերգինե Այվազյանի կողմից խախտվել են ՀՀ կառավարության 26.08.04թ-ի թիվ 1325-Ն որոշմամբ հաստատված ՀԴՄ շահագործման կանոնների 19-րդ կետի «բ» ենթակետի պահանջները, որն առաջացնում է պատասխանատվություն «Հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով:

Հաշվի առնելով վերոգրյալը ՀՀ ԿԱ ՊԵԿ Արմավիրի ՏՀՏ պետի կողմից 25.03.2013թ-ին հրապարակվել է թիվ 2121398 հանձնարարագիրը՝ Ա/Ձ Հովհաննես Գրիգորյանի մոտ հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման ճշտության ստուգում կատարելու վերաբերյալ: Ստուգման արդյունքում կազմվել է ՀՀ ԿԱ ՊԵԿ Արմավիրի ՏՀՏ 05.04.2013թ-ի թիվ 2121398 ստուգման ակտը (այսուհետ նաև ստուգման ակտ), որով հիմք ընդունելով արձանագրությամբ ձեռք բերված տվյալները կիրառվել է «Հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ կետով սահմանված տուգանքը և լրացուցիչ գանձման է առաջադրվել 150.000 դրամ:

«ՀՀ-ում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի հավելված 2-ի 1.4. կետի համաձայն. «Հսկիչ գնումն իրականացվում է հարկային մարմնի ղեկավարի կամ հարկային տեսչության պետի կողմից տրված գրավոր հանձնարարագրի հիման վրա, որտեղ նշվում են հսկիչ գնում կատարելու հիմքերը, նպատակը, տնտեսվարող սուբյեկտի տվյալները (անվանումը, գտնվելու վայրը), հսկիչ գնում իրականացնելու վայրը, ժամկետները և հսկիչ գնում իրականացնող հարկային մարմնի պաշտոնատար անձի (անձանց) տվյալները (անունը, ազգանունը, պաշտոնը)՝ վավերացված հսկիչ գնում իրականացնող հարկային մարմնի կնիքով: Ընդ որում, հսկիչ գնումն այլ անձի միջոցով (անձի գրավոր համաձայնությամբ) իրականացնելու դեպքում հանձնարարագրում նշվում են նաև այդ անձի տվյալները

(ֆիզիկական անձի դեպքում՝ անձնագրային տվյալները, իրավաբանական անձի դեպքում՝ հարկ վճարողի հաշվառման համարը, անվանումը, գտնվելու վայրը)»:

Քննարկվող դեպքում, համաձայն արձանագրության, հսկիչ գնումն իրականացվել է Արմավիրի մարզի Եղեգնուտ գյուղի բնակիչ Գարեգին Մնացականյանի կողմից: Սակայն, ՀՀ ԿԱ ՊԵԿ Արմավիրի ՏՀՏ պետի 21.03.2013թ-ի թիվ 2213606 հանձնարարագրում հսկիչ գնումն իրականացրած ֆիզիկական անձի՝ Գարեգին Մնացականյանի տվյալները, մասնավորապես անձնագրային տվյալները, առկա չեն: Այսինքն, խախտվել են ՀՀ-ում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի հավելված 2-ի 1.4. կետի պահանջները:

ՀՀ կառավարության 27.11.2003թ. թիվ 1561-Ն որոշմամբ հաստատված կարգի 6.1 կետի համաձայն. «Հսկիչ գնման (գնումների) արդյունքում հսկիչ գնում իրականացրած հարկային մարմնի պաշտոնատար անձի կողմից հանձնարարագիրը ներկայացվելուց և արձանագրությունը կազմվելուց հետո, բայց ոչ ուշ, քան սույն կարգի 6.2-րդ կետում նշված ժամկետները, տնտեսավարող սուբյեկտի անունից ապրանքներ վաճառող և (կամ) դրամական հաշվարկ կատարող աշխատողին են վերադարձվում հսկիչ գնմամբ (գնումներով) ձեռք բերված ապրանքը (ապրանքները), եթե չեն փոփոխվել դրա (դրանց) գնման պահին առկա ապրանքային հատկանիշները»:

Բողոքի քննարկման ընթացքում պարզվեց, որ հսկիչ գնման ընթացքում ձեռք բերված ապրանքը ՀՀ կառավարության 27.11.2003թ. թիվ 1561-Ն որոշմամբ հաստատված կարգի 6.1 կետով սահմանված կարգով ետ չի վերադարձվել, այլ մինչ օրս գտնվում է հսկիչ գնումը կատարած անձի մոտ: Այսինքն, ուսումնասիրության ընթացքում խախտվել են ՀՀ կառավարության 27.11.2003թ. թիվ 1561-Ն որոշմամբ հաստատված կարգի պահանջները:

Համաձայն «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 55-րդ հոդվածի 4-րդ մասի «ժ» կետի, վարչական ակտը պետք է պարունակի ակտն ընդունած վարչական մարմնի պաշտոնական կնիքը:

Ստուգման ակտի ուսումնասիրությամբ պարզվեց, որ այն կնիքված չէ ակտն ընդունած վարչական մարմնի՝ ՀՀ ԿԱ ՊԵԿ Արմավիրի ՏՀՏ պաշտոնական կնիքով: Այսինքն, խախտվել են «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 55-րդ հոդվածի 4-րդ մասի «ժ» կետի պահանջները:


Համաձայն «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 63-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետի, անվավեր է առ ոչինչ չհանդիսացող այն ոչ իրավաչափ վարչական ակտը, որն ընդունվել է օրենքի խախտմամբ, այդ թվում՝ օրենքի սխալ կիրառման կամ սխալ մեկնաբանման հետևանքով:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

Չեղյալ համարել ՀՀ ԿԱ ՊԵԿ Արմավիրի ՏՀՏ 05.04.2013թ-ի թիվ 2121398 ստուգման ակտը:

Հանձնաժողովի նախագահ



Տ.ԲԱՐՍԵՂՅԱՆ